

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՐԵԸԵՆՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հիմա, որ վերջացած է Հայկական հանրագիտարանի ամբողջական շարքը, 13 հատորներով, կարժեհ հետադարձ ակնարկ մը նետել կատարված գործին վրա: Հավակնությունը չունիմ երբեք բազմահատոր հանրագիտարան մը գրախոսելու: Արդարև, չեմ խորհիր, թե ունե՞նք կրնա բավարար տեղեկություն ունենալ դրախոսելու բազմահատոր հանրագիտարան մը: Հայկական հանրագիտարանի՝ Ա հատորը լույս տեսավ 1974-ին, իսկ 12-րդ թվագրված հատորը՝ 1986-ին, Վերջին և լիարժեքված հատորը, որ 13-րդը պետք է սեպել (նվիրված է միայն խորհրդային Հայաստանի), լույս տե-

սավ 1987-ին: Ուրեմն 13 տարվան ընթացքին 13 հատորանոց հայկական հանրագիտարան մը լույս տեսավ, առաջինը իր տեսակին մեջ, Հրատարակելի կմնա հատոր մը ևս, որ պիտի պարունակե նյութերու ցանկը:

Հանրագիտարանի 12 հատորներուն մեջ Արևմտյան Հայաստանի մասին տրված տեղեկություններուն շուրջ անցյալին անդրադարձած եմ շարք մը հոդվածներով¹: Ներկա հոդվածով ընդհանուր ակնարկ մը պիտի նետեմ ոչ միայն Արևմտյան Հայաստանի տեղեկություններուն վրա, այլ ընդհանուր ծանոթություններուն վրա:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱԾՊՈՒՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՎՐԱ

1. Հանրագիտարանին կպակսի կրճատումներու ամբողջական ցանկ մը: Ինչպես որևէ հանրագիտարան, Հանրագիտարանն ալ կգործածե շատ մը կրճատումներ: Ա հատորի 716—17-րդ էջերուն վրա ունի կրճատումներու ցանկ մը, առավել յուրաքանչյուր հատորի մեջ անշատ ցանկ մը, որ կուտա քարտեզներու մեջ գործածված կրճատումները: Սակայն հանրագիտարանին մեջ գործածված շատ մը կրճատումներ այս ցանկերուն վրա չեն գտնվիր, ընթերցողը հաճախ մոլորվի մեջ ձգելով:

2. Հանրագիտարանը օտար աշխարհագրական և անձնական անուններու տառադարձության օրենք մը չունի, այսպեսով շատ մը անուններ սխալ ձևով տրված են, դժվարացնելով ընթերցողին գործը անուն մը գտնելու մեջ: Ընդհանրապես, օտար անուն մը գրելու երկու միջոց կգործածվի: Առաջինը, եթե այդ անունը արդեն ընդունված ձև մը ունի հայերենի մեջ, այդ ձևը կշարունակվի: Երկրորդ ընդունված ձևը, երբ գոյություն չունի որոշ անունի հայերեն ընդունված ձևը, այս պարագային կգրվի ճիշդ այնպես, ինչպես այդ օտար բառը կհնչվի իր երկրին մեջ: Հանրագիտարանը չի հետևիր որևէ օրենքի, և այս պատճառով տարօրինակ սխալներու կհանգի պինք:

3. Հանրագիտարանի ուրիշ տարօրինակություն մը օտար անուններու հայերեն թարգ-

մանությունն է: Օրինակ, եթե կուզեք գտնել Անգլիո Ճեյմս Ա թագավորին կենսագրությունը, բնականաբար ձ դիրին տակը պետք է փնտրեք: Իսկ հանրագիտարանին մեջ, պետք է նայիք Հ-ի մեջ, քանի որ Ճեյմս-ը թարգմանված է և եղած, «Հակոբ Ա»:

4. Հանրագիտարանին կազմը, պետք է ավելի խնամված և տոկուն ըլլա, քանի որ հաճախ գործածվելիք հատորներ են, մանավանդ գրադարաններուն մեջ:

5. Հանրագիտարանին մեջ, ինչպես խորհրդային շատ մը գիրքերու մեջ, նկարներու վերարտադրությունը ընդհանրապես հաջող չէ: Մասնավորապես թերի է գունավոր նկարներու վերարտադրությունը: Օրինակ մը կբավե համոզվելու համար: Սարտարապատի հերոսամարտի հուշահամալիրին նկարին (10,224) վերարտադրությունը շատ տկար է և դիտողին վրա չի ձգեր հուշահամալիրին չքնդության համապատասխան տպավորություն: Ասոր բաղդատմամբ, շատ ավելի հաջող են գունավոր քարտեզներու վերարտադրությունները:

6. Հոդվածներու և բառահոդվածներու բա-

¹ «Նոր օր» բացառիկի 1981, «The Armenian Review»-ի ապրիլ 1979, մարտ 1981 և 1982-ի ամսական թիվը, «Ասպարեզի» սեպտ. 10 1984 և «Նոր օրի» նոյ. 21 1986 և հունիս 2 1990-ի թիվերուն մեջ:

ցատրվելիք առաջին բառերը ղլխադիր և հաստ դիրով են: Այս ղլխադիր դիրքերուն Ձ և Ջ գիրերը կարելի չէ դանազանել իրարմե, նույնիսկ խոշորացույցով: Օրինակ, բացօթ 4-րդ հատորի 93-րդ էջը՝ էրդինջան-ի հողվածի սկիզբը, և եթե խոշորացույցով մեծցնենք, կտեսնենք, որ էրդինջանը կրնա էրդինդան կամ էրջինջան կարդացվի:

7. Խորհրդային Հայաստանի զանազան շրջաններու քարանդակներն ոչ մեկը չափ (scale կամ mashtab) ունի: Առանց չափի որեւէ քարտեզ թերի է անշուշտ:

8. Հողմածներու մատենագիտական օտար աղբյուրները արված են միայն օտար լեզուներով: Ընդունված օրենք է, որ երբ օտար լեզվով մատենագիտություն մը կտրվի, նաև պետք է արվի թարգմանությունը այդ օտար մատենագիտության: Ասոր պատճառը պարզ է: Կարելի չէ ակնկալել, որ ընթերցողը, այս պտրադային՝ հայ ընթերցողը, գիտնա նաև ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, իտալերեն և այլն, որպեսզի գրավարար մը ունենա օտար աղբյուրին մասին:

9. Օտար բասերու անտեղի և առատորեն դործածությունը, երբ այդ բառերուն հայերենը արդեն գոյություն ունի: Այս երևույթը անշուշտ Հանրագիտարանի հատուկ չէ: Օտար բառերու, մասնավորապես ֆրանսերեն և անգլերեն յառերու դործածությունը ընդհանրացած է: Երևելահայերու մոտ 1800-ական թվականներին սկսելու Ասոր պատճառներուն մասին արաբահայտվիլը դուրս կմնա սույն հողվածին սահմաններն: Իրականությունը այն է, որ և թե այս օտար բառերու դործածությունը կարելի չէր արդիւնել 1920-ական թվականներին առաջ, քանի որ շուներինք պետականություն, լեզվաբանական հիմնարկ և օթերմինությունական հանձնախումբ, 1920-են ասդին այս օտար ու-թերեկական բառերու դործածությունը պետք էր որ արդիւնել խորհրդային Հայաստանի կառավարության կողմից: Բայց այդպես չեղավ: Իրկար ժամանակ օտար բառերը անկող հյուրերու պես «տուն տեղ» եղած են Մարտոցյան լեզվին մեջ խորհրդային Հայաստանում: Ուրախալի է, որ վերջին տարիներուն Հայաստանի մեջ որոշ տրամադրություն մը կնկատվի սահմանափակելու օտար բառերու դործածությունը:

10. Հանրագիտարանի հողվածները պատրաստող զանազան մասնագետներ հաճախ չեն խորհրդակցած իրարու հետ, և այս պատճառով հառաջ եկած են կարգ մը սխալներ: Հիշեմ միայն մեկ օրինակ: Հանրագիտարանի 10-րդ հատորի 273-րդ էջին վրա կա Սելուկ կամ Սելևգ անունով Պուրսա նահանգին գյուղաքա-

ղաքին մասին (Ջ. Ղազարյանի գրած) հողվածք, որ կրավի թե 1914-ին Սելուկ ուներ 10 000 հայություն: Նույն հատորին 471-րդ էջին վրա, այսինքն 200 էջ հետո, կա ուրիշ հողված մը՝ Սյուլուգի բարբառի մասին (գրված Ն. Մկրտիչյանի կողմից): Անշուշտ Սյուլուգի բարբառը պետք էր հաշորդեր Սելուգ—հողվածին, է, 273-ի վրա: Վերի օրինակին մեջ Ղազարյանը գրած է Սելուգ, իսկ Մկրտիչյանը՝ Սյուլուգ, ուրեմն 200 էջ անգին: Այս գյուղաքաղաքին անվան ընդունված ձևն է Սյուլուգ, կամ արեւմտահայերենով՝ Սելուգ:

11. Հանրագիտարանի մեջ տեղ զտած տպագրական և այլ վրիպակներու ցանկը շատ անկատար և կարճ է: 12-րդ հատորի 749-րդ էջը կուտա ցանկը 12 հատորներու մեջ նկատված վրիպակներու, ընդամենը 39 հատու: Ա հատորի 720-րդ էջը կուտա շորս վրիպակներ, իսկ երկրորդ հատորի 720-րդ էջը՝ վեց վրիպակ: 12-րդ հատորի վրիպակներու ցանկը չի տար Ա և Բ հատորներու վրիպակները, հակառակ որ ցանկը 12 հատորներու վրիպակները պետք էր տար: 3—11-րդ հատորները ցանկ չունին: Կիսրհիմ, թե Հանրագիտարանի խմբարդությունը որեւէ լուրջ ջանք չէ ըրած Հանրագիտարանի 12 հատորներուն վրիպակները զտնելու և հրատարակելու զծով: Վերը հիշված հողվածներու մեջ, Հանրագիտարանի առաջին 11 հատորներուն մեջ ցույց տված էի հարուրավոր վրիպակներ Արեւմտյան Հայաստանի վերաբերելու: Այս վրիպակներն ոչ մեկը կա Հանրագիտարանի վրիպակներու ցանկին մեջ:

Հանրագիտարանի հատորները թղթատելու առնել նկատած եմ հետեւյալ տպագրական և այլ սխալները: Հատոր 2, էջ 501, ֆրանսացի գրող Պոլեմի կենսագրության նկարը ամերիկացի գրող էտկար Ա Փոլին է, նույն նկարը կդանենք հատոր 9, էջ 344, է. Փոլի կենսագրության հետ: Ամերիկացի գրող է. Հեմինգուեյի (ծ: 350) գիրքը՝ For Whom the Bell Tolls, թարգմանված է «Ինչու զանգակները կհնչեն», իսկանակ՝ «Ան որուն համար կհնչե զանգը»: Փրոֆ. Ռ. Հովհաննիսյանի կենսագրության (ծ: 350) հետ տրված մատենագիտության մեջ հիշված է՝ The Armenian Holocaust. The Deportations. Massacres and Dispersion of the Armenian People. պետք է ըլլա՝ The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations. Massacres and Dispersions of the Armenian People, 1915—1923: Ինչպես կտեսնվի, այս հատորը միայն մատենագիտություն մըն է: Նահ-Հովհաննիսյանի The Republic of Armenia-ի երկրորդ հատորը տպված է 1982-ին, և ոչ թե 1979-ին, ինչպես գրված է Հանրադիտա-

ըստին մեջ: Մայրիկա պառնակող մանրէն (7:152) սխալմամբ կոչված է P. Vireax փոխանակ P. Vivax-ի:

Չորրորդ հատոր, էջ 600—602, Լիբանանի մասին հոդվածին մեջ հիշված է, թե Լիբանանցի գրող Նիքոլա-էլ-Թուրք ծագումով հայ էր: Այս սխալ է: Ն. Թուրք պոլսեցի հույն ընտանիքի էր, ծնած Լիբանանի Տեյր-էլ-Քամար գյուղը²: Լիբանանցի պատմաբան Ալպերթ Հուրանի սխալմամբ կոչված է Ալպերթ Հաու-թանի, թատերագիր Ճորճ Շեհաստեն³ Ճորճ Շեխաստե, իսկ թատերական բեմագրիչ Շեքիպ Խուրին⁴ Հակիպ Խուրի:

10-րդ հատորին Սուրիո մասին հոդվածին մեջ, էջ 414, բանաստեղծ Նազար Քաբրանին պետք է ըլլա՝ Նիզար Քաբրենի, երգիծարան դերասան Դուրեդ Լյահամ՝ Դուրեդ Լահամ, իսկ 416-րդ էջին վրա ժեներալ (գորավար) Գարամանուկյանի անունը տրված է Ս. Գա-րամանուկյան, Այս պետք է ըլլա Ա. Գարա-մանուկյան, առաջին անունը քանի որ Արամ էջ, Նույն հատորին էջ 444, գրված է, թե

Միացյալ Նահանգներու նախկին նախագահ Վ. Ուիլսոն ԱՄՆ-ի 38-րդ նախագահն է: Այս պետք է ըլլա 28-րդը, Նույն հատորին 492-րդ էջում, Ֆրանսացի փիլիսոփա Վոլթերի իրական անունը տրված է Մարի Ֆրանսուա Արուե: Այս պետք է ըլլա Ֆրանսուա Մարի Արուե:

12. Սփյուռքի հայ գրողներուն մասին զբ-վածները ոչ միշտ են համեմատական անոնց արժեքին բաղդատմամբ: Օրինակի համար Ֆրանսահայ վիպասան Վահե Քալալի (12:415) ավելի տեղ տրված է, քան Հակոբ Օշականին Վ. Քալալի բոլոր վեպերը հիշված են վերլու-ծումներով: Հ. Օշականի մասին գրված է, թե ան գրական քննադատ է, նաև վիպասան և հիշված է միայն «Մնացորդաց-ը իր վեպերին: Սփյուռքի հայության և Հայաստանի գրասեր հասարակության ծանոթ է Օշականի գրաված արժանի և պատվաբեր տեղը հայ գրականու-թյան մեջ: Փափաքելի պիտի ըլլար, որ իր արժեքին համեմատ անոր տեղ տրվեր Հանրա-գիտարանին մեջ:

II Նկատառություններ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ տեղեկություններում մասին Հանրագիտարանի 12 հատորներում մեջ

Հետևյալ ընդհանուր նկատողությունները կարելի է ընել:

1. Ընդհանուր բժախնդրության պակասը քաղաքներում և գյուղերում անունները ճիշդ գրելու: Օրինակի համար, 10-րդ հատորին միայն մեկ՝ 260-րդ էջին մեջ, Սեբաստիոն նահանգին գյուղերում անուններուն մեջ նկատեցի հետևյալ սը-խալները, Կողալի պետք է ըլլա Կողալի կամ Ղողալի, Կողվա-ն՝ Կավրա, Սլաքիլիս-ն՝ Ալաքիլիս, Կուրլուկյան-ն՝ Ղուրտլուկյա, Բալամզա-ն՝ Բալանկա, Տարենտ-ը՝ Տարենտե, իսկ Գետաղաց-ը՝ Գետաղա: Նույն Սեբաստիոն գավառին մեջ գտնվող Թամզարա գյուղաքաղաքը անշուշտ հիշված է, սակայն անոր քով, փակագծի մեջ գրված է Թոմարզա անու-նը, իբր տարբերակ անունը Թամզարայի: Այս սխալ է, Թոմարզա բոլորովին ուրիշ քա-

ղաք մըն է Կեսարիո մոտ, Թամզարային 175 քմ հարավ-արևմուտք⁴:

2. Պակասավոր տեղեկություն քաղաքներում և գյուղերում մասին: Ա հատորին 239-րդ էջին վրա կկարդանք. «Աղապաղ, գյուղ Արևմտյան Հայաստանում, Սեբաստիայի վիլայեթում, սակավաչուր սարահարթի վրա»։ Հանրագիտա-րանի մը մեջ տրված ծանոթությունները պետք է որ ըլլան կարելի չափով ամբողջական և ճշգրիտ: Վերի օրինակին մեջ անհրաժեշտ է, որ բացատրվեր սակավաչուր սարահարթին ուր ըլլալը, որովհետև Սեբաստիոն վիլայեթը (նահանգը) ուներ 83 000 քառ. քիլոմետր տա-րածություն, այսինքն ներկա Հայաստանն մոտ երեք անգամ մեծ: Պետք է պարզապես հիշվեր, թե Աղապաղ գյուղը կգտնվեր Սե-բաստիային 90 քմ հյուսիս-արևմուտք, իսկ կարևոր քաղաքներում և սեմոյալս պատմական քաղաքներում պարագային, պետք էր որ մատ-նանշվեին, հանրագիտարաններում և աշխար-հագրական բառարաններում համար ընդուն-ված միջազգային գրությամբ, երկայնություն և լայնություն աստիճանները, բան մը, որ

² Տե՛սնել Phillip Hitti. Lebanon in History (Լիբանան պատմության մեջ). Լոնտոն, 1962, էջ 478:

³ Տե՛սնել Generale Aram Karanounkian. Les Etrangers et le Service Militaire (Օտարները և զինվորական ծա-ռայությունը), Փարիզ, 1978: Այս իր տոք-թորայի թեզն է իրավաբանության մեջ:

⁴ Սեբաստիոն նահանգին հայաբնակ տեղա-նուններուն համար տեսնել Գուժկան Սե-բաստիոն (Կարապետ Գարիկյան). Եղեռնապատում Փոքուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոն. Պոստոն, 1924, էջ 598:

բուրգուզիան կապակի Հանրագիտարանին մեջ։
Ա հատորի 135-րդ էջին վրա գրված է.
«Այստեղից, դուրս Շապին Գարահիսարի գա-
վառում, Շապին Գարահիսարից 15 քմ հե-
ռավորության վրա, Զի հիշվիր, թե ղեպի
ո՞ր կողմն է այս 15 քիլոմետրը։ Անհրաժեշտ
էր ըսել, թե Ալամունիկի դուրսը կգտնվեր Շա-
պին Գարահիսարեն 15 քմ ղեպի հարավ-
արևմուտք։ Իսկ երբևէն դուրսի մը, գլխավոր
քաղաքի մը որ կողմը ըլլալը տրված է, բայց
չէ հիշված հեռավորությունը»։

3. Աղավաղումներ և շփոթներ աշխարհա-
դրական վայրերու և տեղանուններու։ Ասոր
պատճառը դարձյալ հեղինակներուն կողմն
դուրսերու և քաղաքներու ճշգրիտ տեղը չգիտ-
նալն է և կամ իրենց ձեռքի տակ ունեցած
սկզբնաղբյուրները Արևմտյան Հայաստանի
մասին բժանդորությամբ չգործածելն է։ Օրի-
նակ, Գ հատոր, էջ 160 կգտնենք, «Գորիթ»,
դուրս Արևմտյան Հայաստանում, Դիարբեքի
վիլայեթում, Դիարբեքից 2 քմ հարավ-
արևելք։ Այս սխալ է։ Գորիթ կգտնվի Տիար-
պեթից 15 ոչ թե 2 քմ հարավ-արևելք, այլ 60
քմ հյուսիս-արևելք, Սիլվան քաղաքն մոտ
չորս քմ հյուսիս-արևելք։ Սիլվան քաղաքը,
ծանոթ նաև Միաֆարդին կամ Նփրկերտ անուն-
ներով, պատմական Տիգրանակերտ քաղաքն է
Հոս Դիարպեթի շփոթված է պատմական

Հին անուն

Հայ Նդիկ
Անշա Գեղ
Ղըթըրպու
Իրինչիլ

Վան քաղաքի երբեմնի հայ գյուղերեն.

Արտամետ
Կենդանանց
Շուշանց

5. Կարող մը կարևոր քաղաքներու մասին
պետք եղածին շափ տեղեկություն չէ տրված,
մինչդեռ շատ նվազ կարևոր տեղերու համե-
մատաբար ավելի տեղ տրամադրված է։ Օրի-
նակ, Ապիոն գյուղին (126) Տրապիզոնի մոտ,
որ միայն 105 ընտանիք ուներ 1914-ին, և ոչ
մեկ մասնավոր պատմական արժեք, 24 տող
հատկացված է. մինչդեռ Կյուրին քաղաքին 9
տող տրված է, իսկ Պրուսայի 10 000 հայ
համայնքին (1914-ին) և 500 տարվա բար-
գավաճ պատմության միայն 2 և կես տող
հատկացված է։ Երբեմն նույնիսկ չէ հիշված,
թե հայ համայնք մը գոյություն ուներ քա-
ղաքի մը մեջ։ Օրինակ (5:570), Լոր կկար-

Տիարպեթի հետ։ Երկրորդ օրինակ մը, 4-րդ
հատոր, 229-րդ էջ կ'իշխի «Թուզլասար, Տու-
զասար, Տուզիսար, գյուղ Սվազի վիլայե-
թում, Ավազ քաղաքից արևելք, ձորակի մը
մեջ։ XX դարու սկիզբը ուներ 250 տուն բնա-
կիչ։ 2 է հիշված, թե այս գյուղին հակա-
կան անունը Աղտը կամ Հաղթ էր։ Մյուս կող-
մն, Ա հատորին մեջ, էջ 266, հիշված է
«Աղտը, Հաղթ, գյուղ Արևմտյան Հայաստա-
նում, Սեբաստիոն Հաֆիկի գավառում...»։ Որոշ
է թե Հանրագիտարանի աշխատակիցները շեն
անդրադարձած թե Թուզլասար և Աղտը նույն
գյուղերն են։ Ուրիշ օրինակ մը. Ե հատոր,
էջ 217, «Կամուրջ, Ուրֆայի մոտ գյուղա-
պետք է ըլլա Կարմուճ։ Իսկ էջ 396, գրված
է, «Կընճըլար, հայաբնակ գյուղ Իզմիրի վի-
լայեթում, պետք է ըլլա Իզմիրի (հին ժամա-
նակ Նիկոմիտիա) վիլայեթ»։

4. Հանրագիտարանը շատ քիչ անգամ
հիշել, թե 1914-ին հայաբնակ քաղաքներու
և գյուղերու անունները թրքական կառավա-
րության կողմն փոխված են մեծ մասամբ։
Օրինակ, հիշված է թե Հաճըն հիմա կկոչվի
Սախմայելի, Ակնը՝ Քեմալիե։ 1959-ին ի վեր,
Արևմտյան Հայաստանի տեղանունները մեծա-
մասնությամբ փոխված են, 100-ին 95 համե-
մատությամբ։ Տամ մի քանի օրինակներ՝
Տիգրանակերտ քաղաքի հայաբնակ գյուղերեն.

Նուր անուն

Էլիտուլու
Կյուվերլին էվլերի
Էյլենճէ
Ենկիթչավուշ

Սարմանսուլու
Պաքաճը
Գեվենլի

Անհրաժեշտ է, որ Հանրագիտարանը հիշեր
1914-ին հետո կատարված փոփոխություն-
ները։

զանք Գոնիայի մասին, ոչ մեկ բառ Գոնիայի
5 000 հոգինոց հայ համայնքին մասին։ Գո-
նիա այն հազվագյուտ քաղաքներն էր, որ
1914-ին գուտ հայկական գոլեճ ուներ (Ճե-
նայան գոլեճը)։

6. Հայ բնակչության թվի անճշգրտություն
կամ մոռացում։ Ա հատորի 346-րդ էջը Այն-

՝ Տեանել Տրգատ Տրգատյան. Հաղ-
թը և Հաղթեցիները. Պոստոն, 1959։

6 Այս անելությամբ տեսնել հողվածիս հե-
ղինակի «Արդի թրքական կառավարության ան-
նախընթաց որոշումը Արևմտյան Հայաստանի
վերաբերյալ. — «Նոր օր», սեպտ. 11 1981։

թապի հայ բնակչության մասին կրսե. ռի. դարի սկիզբներին ուներ 50 հազար բնակիչ, այդ թվում մոտ 20 հազարը հայն: Պակասաւոր է տրված թիվը: Առավել ուշինը ըսված է Այնթապի հայության 1914-ի թիվին մասին: Հայկական աղբյուրները 30—36 000 կուտան հայության թիվը 1914-ին: Նույնիսկ արդի թուրք պատմիչներն ընդհանրապես 30 000 կուտա 1914-ի հայության թիվը: Իսկ ուրիշ այն-թապի թուրք պատմաբան մը, Ուլուրոյ Պարլաս, 30 076 կուտա հայության թիվը 1914-ին:

7. Հանրագիտարանի խմբագիրները շատ անգամ իրենց տեղեկությունները քաղած են Ս. Մոցիկյանի «Արևմտահայ աշխարհ» հատորին, տպված 1947-ին Նյու Յորք: Վերջին քառասուն տարիներու ընթացքին շատ մը հայրենակցական միություններ իրենց ծննդավայրին պատմությունը հրատարակած են: Ասոնցմե քիչերը օգտագործված են հանրագիտարանին կողմից: Օրինակ, չէ հիշված կամ օգտագործված թյուրմանը Նոյալյանի «Արևմտահայ աշխարհ» պատմությունը¹⁰, Անգարայի պարագային՝ Ալիս Օտյան-Գասպարյանի «Պատմագիրք Անկյուրիի և Սթանոզի հայոց»¹¹, Հ. Հովհաննիսյանի «Պատմություն Հայկական Պոնտոսի»¹², որ Տրապիզոնի նահանգին մասին է:

7 Տեսնել Գեորգ Սարաֆյան. Պատմություն Անթապի հայոց. Լոս Անջելես, 1953, Ա հատոր, էջ 87: Նաև Բարդես կաթողիկոս Կյուլեսբյան. Տաթև, կրոնական տարեգիրք. Հալեպ, 1929, էջ 29:

8 Տեսնել Hulusi Yetkin. Gaziantep Tarihi ve Davaları (Կադիանթեպի պատմությունը և կոդիկները), Կադիանթեպ, 1968, էջ 39, Նաև՝ Ughuroi Barlas. Gaziantep Tip Facultesi Tarihi ve Azinlik Okullari (Կադիանթեպի բժշկական դպրոցը և փոքրամասնությանը դպրոցները, Կադիանթեպ, 1971, էջ 13:

9 Թուրքիո հայ համայնքներու հուշամատյաններուն ցանկին համար տեսնել իմ հոդվածս «Արևմտահայության հուշամատյանները և ազգագրության անհետաձգելի պահանջը» — Ասպարեզ, 16 հունիս 1983. Նաև՝ Վերո օր, 8 հուլիս 1983:

10 Բյուզանդ Նոյալյան. Ատանայի հայոց պատմություն. Անթիլիաս, Լիբանան, 1970:

11 Ալիս Օտյան-Գասպարյան. Պատմագիրք Անկյուրիի և Ստանոզի հայոց. Պեյրուս, 1968:

12 Արշակունի (Հովհաննիսյան) Հովհաննիսյան. Պատմություն Հայկական Պոնտոսի. Պեյրուս, 1967:

Չեն հիշված նաև Ա. Պիպերյանի և Վ. Նոյիսյանի «Պատմագիրք Ատանայի և Կադիանթեպի հայոց»¹³, Գ. Ֆեներեյանի «Պատմություն Ասլանպեկի»¹⁴, Հ. Գասպարյանի «Չմըշկածակ և յուր գյուղերը»¹⁵ և Գ. Գեորգյանի «Գեորգի մասին»¹⁶ Չմըշկապատմությունը:

8. Չհիշված հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Մեծ եղեռնի նախօրյակին հայերը մոտ 4 000 քաղաքներու, գյուղաքաղաքներու և գյուղերու մեջ կապրեին Թուրքիո մեջ¹⁷: Հանրագիտարանը ասոնցմե հազիվ կեսը հիշած է, մոտ 2 000 տեղանուն: Կիսորհիմ թե Հանրագիտարանին ամենեն կարևոր թերին է այս պարագան Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Պիտի հիշված ամենեն կարևորները այս չհիշված 2 000 տեղանուններն:

Ա. Անգարայի նահանգին — Յոզղատ և Յոզղատ գավառի (սանճագ) 53 հայաբնակ գյուղաքաղաքներն և գյուղերն ու մեկը հիշված է: Յոզղատ քաղաքը ուներ մոտ 14 000 և շրջակա գյուղերը 73 000 հայ բնակչություն¹⁸: Յոզղատ գավառը Լիբանանի տարածությունը ուներ, մոտ 11 000 քառ. քմ: Չեն հիշված նաև Աթուղ-Մատեն, Թումարդա¹⁹,

13 Արտաշես Պիպերյան և Վարդան Նոյիսյան. Պատմագիրք Ատանայի և Կադիանթեպի հայոց. Փարիզ, 1960:

14 Գ. Ֆեներեյան. Պատմություն Ասլանպեկի. Փարիզ, 1971:

15 Համբարձում Գասպարյան. Չմըշկածակ և յուր գյուղերը. Պոստոն, 1969:

16 Գառնիկ Գեորգյան. Չմըշկապատմություն. Երուսաղեմ, 1970:

17 Թիվերը առնված են հոդվածիս հեղինակի անտիպ հատորին՝ Sarkis Karayan. The Extermination of Armenians in the Ottoman Empire: An Inquiry to Determine the Number of Armenians Killed in Turkey during 1915—1923. With an Index-Gazetteer of 4 000 Armenian Inhabited places in Turkey in 1914. (Հայերու բնաջնջումը Օսմանյան կայսրության մեջ. Վիճակագրական և քննական ուսումնասիրություն մը՝ ճշգրիտ համար հայ զոհերու թիվը Թուրքիո մեջ 1915—1923: Առավել 1914-ին գոյություն ունեցող 4 000 հայաբնակ բնակավայրերու այբբենական ցուցակով):

18 Տեսնել Նուրիա Փիլիպոսյան և Ավետիս Քեստեթյան. Հուշարձան յոզղատցիներու. Յերզնո, 1955, էջ 35:

19 Տեսնել Թորոս Մատազեյան. Հուշամատյան Թումարդայի. Պեյրուս, 1959, էջ 33:

էվերեկ-Ֆենեստի՝ և Իսկիլիպ քաղաքները:

Բ. Ատանայի նահանգեն. Կարս-Բազարը (նկարկայի վերանվանված Գատիրը), Իսլահիե և Խառնը:

Գ. Հալեպի նահանգեն.—Քիլիս քաղաքը, Փեսապ և իր շրջակա աասը գյուղերը:

Դ. Իզմիտ դավառեն—Փյուրդպեն, Ցալու-վա և Ժամավայր գյուղաքաղաքները:

Ե. Խարբերդի նահանգեն—Գեղվանք, Մազ և Պապլվար (անմահացած Ե. Օտյանի «Առաքելություն» մի Յապլվար գրքում):

Ձ. Գոնիայի նահանգեն—Նիսակ կամ Նիկուս:

Է. Սևաստիոն նահանգեն—Կամենի, Կովատուն, Կթանոց, Վերի և Վարի Ածպաններ, Գրիգորիա և Նիքսար:

Ը. Տրապիզոնի նահանգեն—Թորու և Թոզ: Թ. Վանի նահանգեն—Արալեզ, Արեղ, Անուշ-ադրուր և Խալիլան:

Հանրագիտարանի Բ հատորին մեջ հոգված մը կա «Ռուդոլֆի րարառի» մասին, բայց ոչինչ՝ Պուրտուրի հայ համայնքի մասին: Նույնպես (91688) Ռոտոսթոյի (Թեքիրտաղ) րարառը տրված է, բայց ոչինչ հիշված է այդ րարառը խոսողներուն մասին: Ռոտոսթոն հայաշատ քաղաք մըն էր Եվրոպական Թուրքիոյ մեջ, 13.000 հայ բնակչութիւնով 1914-ին:

Եզրափակելի առաջ, կփափաքեմ հետևյալ տողարկները ներկայացնել Հանրագիտարանի խմբագրության.

1. Խմբագրությունը պետք է կոչ ընեն բոլոր ընթերցողներուն, որ Էթի որեւէ տպագրական կամ ուրիշ սխալները նշմարած են, դանոնք գրավոր կերպով հաղորդեն խմբագրական կազմին:

2. Հանրագիտարանի 13 հատորները պետք է ուղարկութիւն վերանայվին. խմբագրության և աշխատակիցներուն կողմէն ստորագրված և թե անստորագիր հոգվածներու պարունակությունը, Էթի հարկ տեսնվի, պետք է վերստուգել, գործածված սկզբնաղբյուրներու հետ քաղդատելով: Բազմահատոր Հայկական Հանրագիտարան մը շափազանց կարևոր է հայության համար, և պետք է գուրկ ըլլա սխալներե, կարելի եղածին շափ:

20 Տեսնել Ա. Գրիգորյան և Ս. Գաբակյան. Հիշատակարան Էվերեկ-Ֆենեսի. Փարիզ, 1963, էջ 33:

21 Տեսնել Սարգիս Փաշաճյան. Հուշամատյան Ռոտոսթոյի հայոց. Պէրուսթ, 1971, էջ 202:

3. Շատ փափաքելի է որ 13 հատորներուն մեջ նկատված բոլոր սխալները հրատարակվին իբրեւ հավելված: Այս նվազագույն պարտքն է, որ խմբագրական կազմը կպարտի ընթերցողին: Եթե այս սխալները չսրբագրվին, ժամանակի ընթացքին իբր ճշմարտություն պիտի ընդունվին՝ նկատի առնելով Հանրագիտարանի խմբագրության հեղինակությունը: Հայաստանն հասած լուրի մը համաձայն, մոտ օրեն լույս պիտի տեսնեն շորս հատորով Հայկական Հանրագիտարան մը, որ միայն հայկական նյութեր պիտի պարունակեն: Կհուսամ թե նոր Հանրագիտարանը պիտի չկրկնեն հինին սխալները:

4. Նաե փափաքելի է, որ օտար մի քանի լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, սպաներեն և ռուսերեն) հրատարակվի 1—2 հատորով հայկական հանրագիտարան մը, զեղատիպ և ներկայանալի տպագրությամբ: Այս կրնա լավագույնս հաջողիլ, եթե Հայաստանի խմբագիրներուն հետ, սփյուռքի հայ և նաե օտար մասնագետներ իրենց մասնակցությունը բերեն նայած իրենց մասնագիտության: Օտար լեզվով հայկական հանրագիտարան մը լավագույն միջոց է մեր Դատը օտարներուն ծանոթացնելու: Առավել, սփյուռքի մեջ ներկայիս հոծ հայություն մը կա, մասնավորապես նոր սերունդին մեջ, որոնք կուզեն կարողալ հայկական նյութերու և հարցերու շուրջ, բայց բավականաչափ հայերեն չեն գիտեղ կարդալ:

5. Հանրագիտարանը պետք է ամեն քանք ընեն ճոխ տեղեկություններ տալու Խորհրդային Միության մեջ գտնվող հայ համայնքներու մասին: Ասոր համար հայ լեզուն և գիրքը լավագույն կապերն են հայ գաղութները իրարու ծանոթացնող և կապող:

Եզրակացնելու համար հարկ է ըսել, թե Հանրագիտարանի ընթերցողը պետք չէ այն կարծիքը ունենա, թե Հանրագիտարանը լեզուն է սխալներով: Ասոնք կրնան սրբագրվիլ, ինչպես հիշեցի, նկատված վրիպակներու ցանկով մը, և վերահրատարակության պարագային՝ սրբագրված տեղեկություններով: Հայկական Հանրագիտարանը կոթողական հրատարակություն մըն է, եզակի իր տեսակին մեջ, և պիտանի ամեն հայուն, որ ամենագույլ հետաքրքրությունը ունի հայկական որեւէ նյութի շուրջ:

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՅԱՆ (ԱՄՆ)